ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 21

ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

12.10.2013
Ք. Իջևան

Ներկա էին խորհրդի բոլոր անդամները.

Օրակարգ

1. Առաջին ընթացիկ քննությունների և ստուգումների նախապատրաստման և անցկացման մասին հաշվետվություն /Զեկուցող՝ Վ. Ալեքսանյան /:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 1-ին կետի վերաբերյալ զեկուցեց ֆակուլտետի դեկան Վ. Ալեքսանյանը: Ընթացիկ քննությունները անց են կացվելու թեստային համակարգով, որը նախապես որոշվել էր տնօրինության կողմից: Յուրաքանչյուր առարկայի համար նախապես ամբիոնին տրված հարցաշարից դասախոսը պետք է կազմի նվազագույնը թեստի վեց տարբերակ: Թեստը պետք է իր մեջ պարունակի չորս թեմա, յուրաքանչյուր թեման՝ երկու ենթահարց, հարցի արժեքը 0.5 միավոր: Մեկ թեմայից ուսանողը կհավաքի մեկ միավոր միայն այն դեպքում, եթե ճիշտ պատասխանի թեմայի երկու ենթահարցերին: Մեկ ենթահարցին ճիշտ, իսկ մյուս ենթահարցին սխալ պատասխանելու դեպքում ուսանողը կզրկվի մեկ միավորից:

Զեկուցողը նշեց, որ ընթացիկ ստուգումները կիրականացվեն գրավոր կամ բանավոր տարբերակով:

Նշվեց նաև, որ պատրաստ է 2013-2014 ուստարվա 1-ին կիսամյակի 1-ին ընթացիկ քննությունների և ընթացիկ ստուգումների ժամանակացույցը:

Ընթացիկ քննությունների և ստուգումների անցկացման շրջանը կտևի սթ. հոկտեմբերի 14-ից մինչև հոկտեմբերի 25-ը:

ՈՐՈՇԵՑԻՆ.-

1. *Հաստատել Հումանիտար գիտությունների ֆակուլտետի 2013-2014 ուստարվա առաջին կիսամյակի առաջին ընթացիկ քննությունների և ընթացիկ ստուգումների ժամանակացույցը:*

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Վ. Ալեքսանյան

ՔԱՐՏՈՒՂԱՐ Ս. Խաչատրյան